

Կ. Թումանյան

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Ողջուն, ողջուն ձեզ՝ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր —
Եղբայրական երգ ու սեր:
Հ. Թ.

Վրաստանի պոետներին նվիրված՝ Թումանյանի բանաստեղծության (1919 թ.) այս տողերը թարմ ու այժմեական են հնչում և այսօր: Ունեղավառությամբ գրված այս տողերը ցույց են տալիս բանաստեղծի ջերմ ու մեծ սերը դեպի վրաց պոեզիան, վրաց ժողովուրդը և դեպի Վրաստանն առհասարակ:

Թումանյանը սիրում էր Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին և տալիս էր շարունակ երազում նրանց երջանիկ ապագան՝ խաղաղ ու կուլտուրական մթնոլորտում: Այդ խաղաղ ու կուլտուրական մթնոլորտը նա դնում էր հնարավոր և իրականանալի՝ ռուս մեծ ժողովրդի բարեկամության պայմանով: Նա այդ էր համարում «պատմության ուղիղ ընթացքը», պատմության ճշմարիտ ճանապարհը:

Ինչպես իր ստեղծագործության մեջ Թումանյանը, որպես բանաստեղծ, ժողովրդից էր գալիս, ժողովրդի ստեղծագործությունից, և դեպի ժողովուրդը դնում, այնպես էլ քաղաքական-հասարակական կյանքում և խնդիրներում Թումանյանը ժողովրդի դարավոր փորձից էր ելնում և դեպի ժողովուրդները գնում: «Մի մեծ բան կա, որ չպետք է շփոթել — էդ ազգերի լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա» — այսպես է ասում Թումանյանն իր «Բողոքի դեմ» հոդվածում¹:

Թումանյանը հավասար աչքով էր նայում բոլոր ժողովուրդներին կյանքին ու բախտին, երբեք չառանձնացնելով հայ ժողովրդին իր մոտիկ հարևաններից: «Մեզանից ամեն մեկս, — ասում է նա, — պիտի սիրենք մեր հարևանի ազատությունն ու աշխատենք նրա համար, պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով»:

Թումանյանի սրտին մոտ ու հարազատ էին բոլոր հարևան ժողովուրդները, հատկապես վրաց ժողովրդի հետ նա կապված էր խորը և ամուր կապերով: «Վրացուն սիրելուց հեշտ բան չկա» — ասում էր նա: Թումանյանի գվարթ ու պայծառ բնավորությունը ներգաշնակում էր վրաց ժողովրդի բա-

¹ «Հորիզոն» № 75, 1910 թ.:

նաստեղծական հոգին, պարզ ու սրտաբաց բնավորությունը, վրացու զվարթ ու անկեղծ երգը, Վրաստանի մեղմ բնությունը: Թումանյանի բազմաթիվ հոգվածներում, նամակներում և ղրուլոններում հաճախ է երևան գալիս զանազան ձևերով արտահայտված նրա այդ ջերմ ու մեծ սերը: Վրաց գրողներին ուղղված նրա մի անտիպ նամակը (1921 թ.) սկսվում է հենց իր այդ սիրով. «Ես, իբրև մի բանաստեղծ մարդ, անհունորեն սեր տածելով դեպի ժողովուրդները, առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբայրակից վրացի ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ թանկագին կապերով»:

Վրաց պոետներից մեկին, իր մի այլ նամակում, 1919 թվին Թումանյանը գրում է.

«Դուք, իմ երիտասարդ բարեկամ, ղգացվում եք, որ ես Վրաստանի մասին թե առաջ, թե այժմ բարձր կարծիք եմ հայտնել ու լավ ցանկություններ:

Այո: Եվ ավելին կասեմ — էդ սերն ու բաղձանքը անասան էդպես էլ կմնան. առաջինը՝ որովհետեւ ես միայն սեր ու բարի ցանկություններ ունեմ ամենքի համար, երկրորդն էլ՝ էդ լավ ղգացմունքները հիմնված են մեր հին եղբայրակից ու բախտակից վրացի ժողովուրդի բարի, պայծառ ու ազատասեր ոգու վրա: Զարտուղի դեպքերն ու անցողակի դժբախտ երևույթները և կամ էս ու էն պակասությունները անկարող են խախտել էդ խոր հավատն ու սերը»:

Թումանյանի այդ լավ ղգացմունքները, որ գալիս էին մեծ հումանիտաբ սրտից, հիմնված էին դարերի կյանք ունեցող փաստերի ու դեպքերի վրա: Ամեն անգամ, երբ առիթ էր լինում, նա միշտ այդ փաստերով էր գալիս լուսավորելու վրաց և հայ ժողովուրդներին կյանքի մուլթ միջադեպերը, ցույց տալու, որ հայն ու վրացին միշտ եղել են և պիտի մնան հաշտ ու համերաշխ լավ հարևաններ:

Նա մի անասան, կուռ հավատ ուներ դեպի ժողովուրդների խաղաղասիրական բնազդը. նրա խորը համոզմունքով՝ ժողովուրդներն առհասարակ անընդունակ են կռվի, արյունի, որ նրանք միայն մի հակում ունեն՝ ապրել խաղաղ ու հաշտ կյանքով: «Ժողովուրդի հոգին միշտ բարձր է ու ազնիվ և խորթ է ու օտար ամեն բռնություն, անընդունակ է ամեն վատ պործի»:

Նշելի է հատկապես Թումանյանի «Պայծառ էջեր» հոդվածը, որտեղ նա ակնարկ է նետում երկու ժողովուրդների պատմական անցած էտապների վրա, շեշտելով այն հանգամանքը, որ երկու ժողովուրդներն էլ իրենց պատմութունն սկսում են նրանով, թե «Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը եղբայրներ են եղել, մնացել են ու մնում են անասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով», թե երկու ժողովուրդներն էլ բախտակից ժողովուրդներ են, միասին են զարգացել, պայքարել ու տառապել իրենց աղատություն, իրենց կուլտուրայի համար և միշտ փոխադարձաբար օգնել ու ապավինել են իրար:

«Աշխարհքում եթե ժողովուրդներ կան, որոնք իրենց դարավոր ազնիվ մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի են լավագույն օրերի՝ անկասկած դրանցից է վրացի ազգը: Ու ինչո՞ւ հայը նրա

երջանկության ցանկացողը Հպետք է լինի» — այսպես է գրում Թումանյանը 1915 թ. իր անտիպ հոդվածներէից մեկում:

*
* *
*

Անդրկովկասյան ժողովուրդները միջև բարեկամական կապեր ստեղծելու լավագույն հաստատուն միջոցներից մեկը Թումանյանը համարում էր գրականությունը, ժողովուրդների գրականության փոխադարձ ճանաչողությունը: Սկզբերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արծարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, — ասում է նա, — քան գրականությունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին¹:

Այս խորը համոզմունքին լինելով, Թումանյանը ոչ միայն ինքն անձամբ ուսումնասիրում էր վրաց, պարսիկ և այլ ժողովուրդների գրականությունն ու արվեստը, այլև ամեն կերպ աշխատում էր լայնացնել, ընդհանրացնել, մասսայականացնել այդ փոխադարձ ծանոթության և ճանաչողության գիտակցությունը: Այդ նպատակով Թումանյանը Գրողների Ընկերության միջոցով կազմակերպում է մի շարք երեկույթներ՝ նվիրված հարևան ժողովուրդների գրականությանը և, առաջին հերթին, վրաց գրականությանը, որպես ամենամոտ ու հարևան ժողովրդի:

Բացի գրական երեկոներից, անձնական կապերից ու ծանոթություններից, Թումանյանը մեծ կարևորություն էր տալիս նաև թարգմանական գործին: Թարգմանական գրականության միջոցով է, որ ժողովուրդները կարող են ավելի մոտիկից իրար ճանաչել և խորացնել փոխադարձ բարեկամական հարաբերությունները:

Թե որքան մեծ տեղ և նշանակություն էր տալիս Թումանյանը թարգմանական գրականությանը, այդ երևում է վրաց բանաստեղծ Սիկո Փաշալաշվիլու հուշերից, ուր նա հիշատակում է Թումանյանի կատարած գործն այդ բնագավառում: Ահա մի հատված Ս. Փաշալաշվիլու հուշերից՝ գրված 1936 թ.

«Թարգմանությունը լավ ճյուղ է, — ասում էր Հովհաննեսը, — սակայն նա պատահական բնույթ Հպետք է կրի: Այս գործը մեղանում պետք է խորանա: Նրա միջոցով հարևան ազգերը պետք է ճանաչեն միմյանց կուլտուրական հարստությունը, գրականությունը, արվեստը, պետք է հասկանան միմյանց ցամաք ու ուրախությունը:

Հետագա տարիների ընթացքում Հովհաննեսն աշխատում էր նույն գաղափարը գործնականապես իրականացնելու համար: Նրա խորհրդով մի շարք հայ բանաստեղծներ ու արձակագիրներ սկսեցին թարգմանել վրաց գրականությունից նմուշներ: Որոշված էր նույն գրողների գլխավորությամբ կազմակերպել վրաց գրողների տուրնի Հայաստանում և հայ գրողներին՝ Վրաստանում, սակայն այս բանին խանգարեց փետրվարյան հեղափոխությունն ու հետագայում մենչևիկների և գաշակների մարզակեր շովինիզմը:

Հ. Թումանյանն սքանչելի նախաձեռնություն ցույց տվեց հայ և վրաց գրողների մերձեցման գործում: Նա այս գործը գլխավորում էր գրական

¹ Խոսք՝ ասված վրաց գրականությանը նվիրված երեկույթին. «Հուրիգոն» № 52, 1914 թ. մարտի 9:

հանդիպումների միջոցով: Հովհաննեսի գլխավորութեամբ բազմաթիվ դիտ-
պույտներ, թարգմանություններ ընթերցումներ և զբաղան-երաժշտական
երեկոներ կազմակերպվեցին¹:

*
* *

Թումանյանի սերն ու համակրանքը դեպի վրաց ժողովուրդն արտա-
հայտվել է նաև նրա պոեզիայում: Դեռևս 1892 թվին գրում է երկու հարե-
վան ժողովուրդներին նվիրված «Հաշտություն» վերնագրով մի բանաստեղ-
ծություն, որտեղ սիմվոլիկ կերպով այդ երկու ժողովուրդները ներկայանում
են լեռների պատկերներով, մեկը՝ Մասիսի, իսկ մյուսը՝ Կապուկի: Այդ եր-
կու լեռները Կովկասյան լեռների շուրջպատում իրար հաշտության ձևով
են մեկնում, իրար գգվում —

Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր ընկեր,
Մի նայիր հաե, ի՞նչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում²:

1893 թվին, վրաց նշանավոր բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու աճյունը
Գանձակից Թիֆլիս փոխադրելու առթիվ, Թումանյանը գրում է «Ն. Բա-
րաթաշվիլու դամբանի վրա» բանաստեղծությունը, ուր երևում է Թումա-
նյանի սերը, հոգեկցական ներքին կապն ու հարազատությունը դեպի այդ
մեծ բանաստեղծը:

Մխիթարելով սգավոր Վրաստանին իր վերաշարժված ցավ ու կսկիծի
համար, մխիթարում է վրաց ժողովրդին, որ բանաստեղծն իր երգերով ու
գործերով միշտ էլ մնում է կենդանի ու անմահ.

Կը թաղես, այն, դարձյալ քո երգչին,
Բայց նըրա վառած զգացմունքներին
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կը մնան հավիտյան,
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր:

Եվ քեզ, անցավոր շիրիմից շիրիմ,
Հեզ ժողովրդի երգիչ մտերիմ,
Ի՜նչ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով³:

Այս բանաստեղծությունը, որ Թումանյանը կարդացել է 1893 թ. ապ-
րիլի 25-ին, որպես «Մուրճ» ամսագրի ներկայացուցիչ, վրացերեն թարգ-
մանել է կարգադրիչ հանձնաժողովի անդամ Աննադարովը: Բանաստեղծու-
թյան բովանդակությունը վրացերեն լեզվով տպագրվել է վրացական «Կվա-
լի» թերթում (1893 թ. № 18):

¹ Մի կ ո Փ ա շ ա լ ա շ վ ի լ ի — «Ազգերի եղբայրության դրոշակակիրը». տես «Արշավ»
երկամսյա ժուռնալ, № 2, էջ 19—20, Թբիլիսի, 1938 թ.:

² Հ ո Վ Ն. Թ ու մ ա ն յ ա ն — «Գեղարվեստական երկեր», էջ 114, Երևան, 1934 թ.:

³ «Մուրճ», 1893 թ., № 4, էջ 520:

1918 թվին Թումանյանը գրում է «Վրաստանի ոգին» բանաստեղծութունը և նվիրում վրաց պոեզիայի օրվան՝ մայիսի 7-ին: Այս բանաստեղծութունն սկսվում է հետևյալ տողերով.

Գալիս եմ ես Վրաստանի
Զրքնաղ ոգուն երկրպագու,
Քրքոջը վեհ ու գեղանի,
Քրքոջն արի հայի հողու¹:

1916 թվին, հայ-վրացական հարաբերությունների առիթով գրում է «Վրաստանի համար» բանաստեղծութունը՝ «Հողվածի փոխարեն» ենթավերնագրով, որտեղ առանձին սիրով ու ողևորությամբ հանդես է գալիս ի պաշտպանություն վրաց ժողովրդի խաղաղասիրական բնավորության: Այդ բանաստեղծութունն սկսվում է այսպես.

Երբ խոսում են Վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում հայտնի,
Նվ խորին ցավ, և ամոթ:

Ո՛չ ապաքեն գիտեն նրա
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ²:

Որպես ժողովուրդների համերաշխ կյանքի ջատագույններից մեկը Թումանյանն առանձին սեր ու ակնածություն ունեւր դեպի վրաց պոեզիայի մեծ ներկայացուցիչը՝ Շոթա Ռուսթավելին, որն ինքն արդեն ժողովուրդների եղբայրության սիմվոլն է: Ամեն անգամ, երբ խոսք էր լինում Ռուսթավելու մասին, Թումանյանը որակում էր նրան որպես Վրաստանի անմահ Շոթայի, ոսկեյար քնարով ու կաթոգին ձայնով մեծ Շոթայի: Իր գրադարանում Թումանյանը մի բարձր պատվանդանի վրա էր պահում ժողովրդական քանդակագործ Յա. Նիկոլաձեի կերտած Ռուսթավելու կիսանդրին:

Մոտ քառասուն տարի ապրելով Թբիլիսիում, նա լայն ծանոթություն ունեւր վրաց գրողների, գործիչների և արվեստագետների հետ: Անձամբ ծանոթ էր Իլիա Ճավճավաձեին, Ակ. Ծերեթելուն, Վաթա Փշավելուն և ուրիշներին:

1907 թվին, Իլիա Ճավճավաձեի մահվան առիթով, Թարգմանում է նրա երկու բանաստեղծությունը՝ «Գարուն» և «Էլեգիա»: Առանձին մտերմություն և հարազատություն էր զգում դեպի Վաթա Փշավելին, սիրում էր նրա առողջ, լեռնային պարզ հոգին և ժողովրդական շնչով տոգորված պոեզիան: 1915 թվի ամառը, երբ Վ. Փշավելին հիվանդ էր, Թումանյանն այցելություն էր գնում նրան և առանձին համակրանքով խոսում նրա մասին:

1914—15 թ.թ. նա մոտ էր վրաց Գրողների Միության նախագահ Կոտե Մաղաշվիլուն, Դավիթ Կրիաշվիլուն, Իլիա Նակաշիձեին, Զ. Պալիաշվիլուն,

¹ «Նոր աշխատավոր» № 27, 1920 թ.

² «Հորիզոն» № 208, 1916 թ. սեպտ. 18:

Շալվա Դադիանուն, Դ. Տաբիձեին, Ի. Դրիշաշվիլուն, որոնց հետ կապված էր փոխադարձ բարեկամությունը:

Թումանյանը բանաստեղծներին համարում էր ժողովրդի իսկական ներկայացուցիչներ ու հարազատ զավակներ և միշտ նրանց էլ ուղղում իր խոսքը: Վրաց գրողներին և գրականագետներին ուղղված իր բոլոր նամակներն ու ողջույնները նա միշտ վերջացնում է երկու հարևան ժողովուրդների պայծառ ու երջանիկ ապագայի հույսերով ու բարեկամական կապերի հեռանկարներով:

1918 թ. Դավիթ Կլեիաշվիլուն ուղղված նամակը Թումանյանը եզրափակում է հետևյալ խոսքերով.

«Վաղը պիտի ստեղծենք մեր երազած մթնոլորտը:

Հոգով նվիրված քեզ և ամբողջ վրացի ժողովրդին՝

Հովհ. Թումանյան»,

իսկ Ս. Փաշալաշվիլուն ուղղված նամակը վերջացնում է այսպես.

«Հավաստիացնում եմ Ձեզ, որ ինչքան թանգ են ինձ Վրաստանը և սքանչելի վրացական հոգին, նույնքան թանգ են և այն մարդիկ, որոնք հանդիսանում են այդ հոգու կրողներն ու մեկնաբանողները:

Վրացին — դա արդեն բանաստեղծ է, իսկ վրացական բանաստեղծը — դա կրկնակի բանաստեղծ է:

Ամբողջ հոգով ցանկանում եմ, որ ողջ լինեք միշտ երգելու Վրաստանի երջանկությունն ու նրա լուսապայծառ օրերը»¹:

Նույն փոխադարձ ջերմ սիրով էին համակված վրաց գրողները, արվեստագետներն ու գործիչները դեպի Թումանյանը: Վրաց հայտնի դրամատուրգ Շալվա Դադիանին իր հուշերում գրում է հետևյալը.

«Նա մեծ հավատ ու հոգու անսասանություն էր հանդես բերում, երբ խոսքը վերաբերում էր իրեն հետաքրքրող ու այրող հարցերին:

Որոնք էին այդ հարցերը: Պոեզիան և ժողովուրդների բարեկամությունը, մասնավորապես հայ-վրացական փոխհարաբերությունները:

Որքան քնքշանք, որքան գորովալից սրտի կսկիծ կար նրա խոսքերի մեջ:

Արաքս և Կուր գետերի մի հարթավայրից սկիզբ առնելը, հետագայում կողք-կողքի եղբայրաբար հոսելը և վերջում միանալը՝ ծովի մեջ թափվելու համար — նրա աչքում մի կենդանի սիմվոլ էր երկու ժողովուրդների պատմական ճակատագրի: Նրա պատկերացումով՝ ծովն այստեղ ներկայանում էր որպես մարդկություն: Նա հավատում էր, որ Հայաստանն ու Վրաստանը ինքնուրույն կերպով դարգանալով և հասունանալով, հարազատ ու բարձր կուլտուրայով զինված, վերջում իրենց լուսման պիտի գցեն ողջ մարդկության գանձարանը:

Մենակ էր նա, որը էր մնացել այս անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրություն իր քարոզով:

Պատմությունը, սակայն, ապացույցեց, թե որքան ճիշտ էր մտածուկ ու զգույն Թումանյանը՝ այդ մեծ մարդը»²:

¹ «Թումանյանը քննադատ», էջ 450, Երևան, 1939 թ.:

² Շալվա Դադիանի — «Անվեհեր հոգու տեղ պոետը» («Պոետը. Հայաստան» 1938 թ., № 67)։

* *

1918 թվի նոյեմբերին մենշևիկյան և դաշնակցական բուրժուական կառավարությունների միջև բռնկում է հայ-վրացական պատերազմը։ Թումանյանը լուռ հանդիսատեսի դերում չի մնում, այլ վրդովված ու վշտացած այդ տխուր միջադեպից, հենց առաջին օրերին միջամտում է, միջոցներ ձեռք առնում դադարեցնելու այդ չարաքաստիկ պատերազմը։

Այդ օրերին նա կորցրել էր իր հոգեկան հանդիսուն ու հավասարակշռությունը. մի խորը վիշտ էր պատել նրան և ներքին վրդովմունք։ Բացի վրացի և հայ մտավորականներին ու թերթերի խմբագիրներին կատարած անձնական այցելություններից՝ նա, իր կենդանի գրույցի ու խոսքի հետ միաժամանակ, մի շարք հոդվածներ է գրում այդ տխուր պատերազմի առիթով՝ իր դարմանքն ու գայլույթը հայտնում՝ խոր ցավի հետ միասին։ Իր հոգվածներում էքսկուրսներ է կատարում դեպի անցած դարերը, պատմությունից օրինակներ է բերում հիշեցնելու անցյալում հայ և վրաց ժողովուրդների սերտ բարեկամական կապերը, Աշոտ և Դավիթ թագավորների պայծառ շրջանը, համոզելու, որ հայն ու վրացին եղբայրական ժողովուրդներ են եղել և նրանք երբեք եղբայրասպան պատերազմներ չեն ունեցել ու չեն կարող ունենալ։

«Ազգերի հարևանությունների մեջ դժար կարելի է գտնել ավելի լավ հարևաններ, քան հղել են հայն ու վրացին» — այսպես է սկսում Թումանյանն այդ պատերազմի առիթով գրած «Վերջին տեղատվությունը» իր հոդվածը և ապա թվելով հարևան թշնամի ազգերին, շարունակում է.

«Պատմության մեջ հայտնի չի հայ-վրացական պատերազմ։ Երկու ժողովուրդներն էլ եղբայրորեն կարեկցել են իրար, իրար օգնել ու միասին կանգնել դիմագրավել են ընդհանուր թշնամուն, լավ հասկանալով, թե իրենց ճակատագրերն ինչպես սերտ կապված են իրար հետ»¹։

Եվ հանկարծ՝ սահմանային շրջանների համար 1918 թ. նոյեմբերին երկու ժողովուրդների «դեմոկրատիկ սոցիալիստական» կառավարությունները պատերազմ են հայտարարում իրար... ահա ինչն էր, դարձացնում և վշտացնում Թումանյանին։

Թումանյանը շատ բարձր էր դնում Վրաստանի պատմական դերը և մեծ կարևորություն ու նշանակություն տալիս Վրաստանի հարևանությանը Հայաստանի համար. «Դժվար է մի կարճ ակնարկի մեջ պատմել, թե ինչ է եղած Վրաստանը Հայաստանի համար երկար դարերի ընթացքում։ Ես էդ մասին կցկտուր խոսք եմ արել տարիների ընթացքում մի շարք հոդվածների մեջ» — այսպես է գրում Թումանյանն իր մի սևագիր, անվերնագիր հոդվածում, որն սկսվում է «Հս պայծառ դեպքերը...» բառերով։ Ինչպես այս, այնպես էլ 1918 թ. անտիպ հոդվածներից մեկում, վերնագրված՝ «Մոտիկ հարևաններն ու հեռու բարեկամները», Թումանյանը խիստ կերպով դատապարտում է այն ղեկավարներին, որոնք իրենց սխալ քաղաքականություն հետևանքով հայ ժողովրդին տարել են դեպի կործանում, դեպի անդունդ և երկիրը դարձրել ավերակ։

Նա դատապարտում է նրանց հատկապես այն բանի համար, որ տարի-

¹ «Ժողովրդի ձայն» № 60, 1918 թ. նոյեմբերի 16.

ների ընթացքում չեն կարողացել բարեկամական հարաբերություններ ստեղծել իրենց հարևան ժողովուրդների հետ, ճանապարհ ու լեզու գտնել հաշտ ու խաղաղ ապրելու, առաջին հերթին՝ մոտիկ հարևանի—վրացիների հետ և հույսները դրած հեռու բարեկամների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի և մյուսների վրա, հավատում են նրանց օգնությունը և գոտովում վրաց և ադրբեջանական ժողովուրդների հետ:

«Հայ ժողովրդի ղեկավար շրջանները հույսները դրած հեռու բարեկամների վրա, չաշխատեցին կապվել իրենց մոտիկ հարևանների հետ, ոչ նույնիսկ Վրաստանի հետ, և քննադատված թշնամիներով:

Ասում եմ նույնիսկ Վրաստանի հետ, որի հետ ոչ միայն հին հաշիվ ու թշնամություն չունեն, այլ բարեկամական հին ու մեծ կապեր ունեն և կարող էր նոր սրտալի կապ հաստատել»¹:

Հայտնի է Թումանյանի՝ այդ օրերին գրած և Հևան Կիպիանուն ուղղած մարգարեական ու խաղաղասիրական նամակը, որտեղ կրկին անգամ շեշտում է ժողովուրդների ատելությունը դեպի սուրն ու թշնամությունը և բռնուն ցանկությունը կապվելու եղբայրական համերաշխության կապերով:

«Ժամանակն է, որ մեր կառավարող շրջաններն էլ հասկանան ժամանակի ու ժողովուրդների պահանջները, նրանք էլ մի քիչ բանաստեղծ դառնան, նրանք էլ մեզ հետ ու մեր ժողովուրդների հետ միասին գան մեր եղբայրության կամուրջի մեջտեղը եղբայրորեն համբուրվելու, այլապես նրանց էլ կհասնի էն կառավարիչների ճակատագիրը, որոնք խորտակվում են իրենց վատ ճանապարհին և անեծքով կորչում են եղբայրության, խաղաղության ու արդար աշխատանքի դրոշմ տանող ժողովուրդների ոտների տակ»²:

Թումանյանն իր ակտիվ մասնակցությունը ու միջամտությունը աջակցում է վերջ դնելու հայ-վրացական խայտառակ պատերազմին: Նրա նախաձեռնությամբ Թբիլիսիում երկու ժողովուրդների ներկայացուցիչներից գումարվում է մի խորհրդակցություն, որտեղ ձևակերպվում են հաշտության պայմանները:

Թումանյանը, որպես Հայրենակցական Միությունների Միության նախագահ, 1919 թ. դեկտ. 18-ին, Միությունների բոլոր ներկայացուցիչների մասնակցությամբ արտակարգ նիստ է հրավիրում. քննելու հայ-վրացական ընդհարման խնդիրը և կասեցնելու այն: Ահա այդ նիստի որոշումները, որ հանված են Հայկական ՍՍՌ Պետ. Կենտրոնական Արխիվից:

«Հայոց Հայրենակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդը իր դեկտեմբերի 18-ի արտակարգ նիստում քննելով հայ-վրացական ընդհարման խնդիրը և ի նկատի ունենալով—

1. որ հարևան և ազգակից ժողովուրդների միջև առաջ եկած եղբայրասպան պատերազմը հղի է սարսափելի ծանր ու կործանարար հետևանքներով,

2. որ այդ ժողովուրդների բարյացակամ ու խաղաղ համակեցությունն է միակ գրավականը նրանց քաղաքակրթական հառաջադիմության և քաղաքական ու տնտեսական բարգավաճման,

3. որ այդ երկու եղբայր ժողովուրդների պատմության մեջ չեղած՝

¹ «Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը» անտիպ հոդվածից:

² Հևան Կիպիանուն ուղղված նամակից. «Кавказск. слово» № 66, 1919 թ. ապրիլի 10:

համակեցության խախտումը կնշանակի ոճիր դործել այդ ժողովուրդների խղճմտանքի դեմ,

4. որ չկա և չի կարող լինել այդ երկու ազգակից ժողովուրդների միջև և ոչ մի դեպք ու ոչ մի խնդիր, որ անկարելի լիներ լուծել հաշտ ու խաղաղ ճանապարհով,

5. որ այդ համակեցության խախտումը կատարվում է այն ժամանակ, երբ այդ ժողովուրդները մտնում են նոր ու լուսավոր կյանքի շրջանը—

Որոշեց—ա) բոլոր կերպով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, բ) պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական դործողությունները, գ) ընդհարման պատճառները վերացնելու համար անմիջապես դուրսարել հայ-վրացական կոնֆերանս, որի իրավասությանը հանձնել նաև մյուս բոլոր վիճելի խնդիրները, դ) տրամադրել երկու կառավարություններին խորհրդիս լայն աջակցությունը վերահիշյալ նպատակներին հասնելու համար և այս որոշումը հայտնել երկու կառավարություններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկություններին և ամեն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խավերի մեջ:

Հայրենակցական Միություններ՝ Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի, Ախալքալախի, Գանձակի, Ղազախ-Շամշադնի, Ղարսի, Ղարաբաղի, Լոռու, Հին-Նախիջևանի, Նոր-Ֆայազետի, Պարսկաստանի, Փամբակի, Շամախու և Շուլավերի» (նիստի որոշումներն ստորագրել է Հ. Թումանյանը):

* * *

Թումանյանի խաղաղասիրական գործունեության արձագանքներն ափելի ցայտուն տեսնում ենք 1919 թվին, երբ Թբիլիսիում տոնվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Այդ հոբելյանին մասնակցում են Անդրկովկասի ժողովուրդներից՝ վրացիները, ադրբեջանցիները, ինչպես և ռուսները, որոնք ողջունելով Թումանյանին, որպես վաստակավոր գրական գործչի, ընդգծում են հատկապես նրա խոշոր դերը ժողովուրդների համերաշխության ու եղբայրության գործում:

«Վերջերս իմ հիսնամյակի առիթով ես համոզվեցի, որ գործն արդեն չափազանց շատ է հասունացած: Տեսա, որ մեր հարևան ժողովուրդների ներկայացուցիչները ինչքան իրենց հարևան ժողովրդի գրականությունը հարգելու համար են գալիս, հազար էնքան թանգ է նրանց համար էն լուրը, որ ես կողմակից եմ եղած ժողովուրդների համերաշխությանն ու եղբայրությանը:

Մեր հայ հասարակությունը երբեք էնքան բուռն չծափահարեց իմ բանաստեղծություններին, ինչքան ազգերի հետ եղբայրության խոսքը: Ես շատ բաների մասին խոսեցի, բայց ամենից ավելի մեր նոր երիտասարդությունը ոգևորված ծափերով ընդունեց, երբ ես՝ փորձված անցած սերնդի փորձերից, նոր սերնդին կտակում էի չդնալ հսկերի հետքով, թողնել սահմանափակ ազգայնականությունը ու թշնամանքը ու փորձված երջանկություն համար եղբայրանալ հարևան ժողովուրդների հետ: Եվ պետք է տեսնել, թե ամեն անգամ ինչ ոգևորություն է տիրում մեր հասարակությանը, երբ ինձ հետ միասին նրա մեջ հայտնվում են մեր հարևան ժողովուրդների բանաստեղծները:

Սրանով մեր ժողովուրդներն իրենք արդեն ցույց են տալիս ճանապարհը և հրամայում են զնալ էդ ճանապարհով»¹։

Պայծառ ապագա ստեղծելու գործը նա համարում է նոր սերնդի անելիքներից մեկը, որ նրանք պետք է հների ճանապարհով չզնան, այլ նոր կյանք ստեղծեն։

Իր հիսնամյակի առթիվ ուսանողությանն ու աշակերտությանն ուղղված պատասխան խոսքում Թումանյանն ասում է. «Շատ ճակատներ կան պատերազմում, սակայն ամենավսեմը ձերն է, որովհետև դուք եք կռվում այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն ու ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս և արդարություն։ Դուք պիտի պայքարեք՝ վերացնելու ժողովուրդների վրայից տանջանքներն ու թշվառությունները»²։

Իսկ ուսանողությանն ուղղված իր խոսքը եզրափակում է այսպես. «Թող մեր համրույրները անցնեն ժողովուրդներին, թող սերը թագավորի նրանց սրտերում»։

1920 թվի մայիսի 7-ին վրաց գրողները տոնում են իրենց պոեզիայի և գրականության օրը. Թումանյանն այդ առթիվ գրում է «Գնանք» վերնագրով հոդվածը և անձամբ ողջունելով վրաց գրողների տոնը, անդրադառնում է մոտ անցյալում տեղի ունեցած հայ-վրացական պատերազմին.

«Ես ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարավոր անօրինակ լավ հարաբերությանը և խորին վիշտ է պատճառում ինձ մեջտեղի եղած թյուրիմացությունը։

Ժողովուրդների որոշումներն ու քայլերն ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարությունների։

Կառավարությունները ժամանակավոր են ու փոփոխելի, ժողովուրդները՝ մշտական ու անփոփոխ»³։

1921 թվին, վրաց գրողները Թումանյանին համարելով երկու հարևան ժողովուրդներին միացնող դեմքերից մեկը և միևնույն ժամանակ իրենց բանաստեղծը, որպես երկու ժողովուրդների «ընդհանուր» բանաստեղծի, իրենց կողմից ևս կենսաթոշակ են նշանակում նրան. Թումանյանը, վրաց գրողների այդ վերաբերմունքից զգացված, մի նամակ է ուղղում «Իմ եղբայր վրացի գրողները» վերնագրով։

Թումանյանը չի բավականանում հոգւածներով, նամակներով, ելույթներով և ամենօրյա կենդանի կապի պահպանումով այդ ժողովուրդների հետ, ոչ էլ նույնիսկ իր ակտիվ մասնակցությամբ 1905—1906 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների և կամ 1918—1921 թ.թ. դեպքերի կասեցմանը։ Այդ տարիներին նա մտածում էր անդրկովկասյան ժողովուրդների փոխադարձ եղբայրությանը մի ժողովածու նվիրել, դրա համար 1919 թվին սկսում է հայ, վրաց, ադրբեջանական աշխատավոր ժողովուրդների բարեկամությանը վերաբերող, նրանց պայծառ հարաբերությունը լուսարանող զանազան նյութեր, դոկումենտներ հավաքել։ Այդ ժողովածուի միջոցով նա ուզում էր ցույց տալ, որ աշխատավոր ժողովուրդները կապված են իրար հետ սիրով,

¹ «Իմ պատասխանները Լևոն Կիպիանյանին». «Каквазское слово» № 66, 1919 թ.։

² «Մշակ» № 41, 1919 թ. փետրվարի 21։

³ «Նոր աշխատավոր» № 98, 1920 թ. մայիսի 6։

և միայն բուրժուական կառավարութիւնների իշխանավորներն են, որ սը-
րով կտրում են այդ կապը:

1919 թվին թերթերում նա հետևյալ հայտարարութիւնն է տալիս.
«Թէ 1905—06 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, թե վեր-
ջին մեծ պատերազմի ժամանակ շատ դեպքեր են պատահել, երբ հայը
պաշտպանել է թուրքին, թուրքը՝ հային, ցույց տալով մարդասիրութեան
կամ անոխակալութեան բարձր օրինակ, նույնիսկ հաճախ իր անձը վտանգի
ենթարկելով»:

Ես հավաքում եմ էդ դեպքերի պատմութիւնները, և սրանով խնդրում
եմ էն բոլոր մարդկանց՝ հայ, թուրք, թե ուրիշ ազգի՝ ով գիտե էդ տե-
սակ որևէ դեպք, նեղութիւն քաշի իր գիտցածը տեղով ու անունով գրի
և իր ստորագրութիւնով ինձ ուղարկի էս հասցեով...»¹:

Այդ ժողովածուի վերնագիրը Թումանյանը դնում է «Պայծառ էջեր»,
որովհետև, ինչպես ինքն էր ասում, պայծառ էր նայում ժողովուրդներին
սպառնալիս: Դժբախտաբար այդ գործը մնում է անավարտ:

* * *

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման պայքարը Թումանյանը
կապում է ողուս մեծ ժողովրդի ուղուցիտն պայքարի հետ:

1905 թվի հայ-թուրքական կոտորածը նա համարում է ցարիզմի վա-
րած ընդհանուր ազգային քաղաքականութեան հետևանք, ողուսական բյու-
րոկրատիայի սև գործը, որ դրանով ցարիզմը ձգտել է «սլաղեցնել, պղտո-
քել, թունավորել ժողովուրդների հարաբերութիւնները»:

«Հեղափոխութեան ուրվականից վախեցած ողուսական բյուրոկրատիան
ժողովուրդների համար մի չար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել դրանց
և դրանով զբաղեցնել նրանց ուշադրութիւնը»²—այսպես է սկսում իր
«Պայծառ էջեր» հոդվածը:

«Էդ ուղղութեամբ նա դործի ձեռնարկեց Անդրկովկասում—պետք էր
խրար դեմ հանել երեք ժողովուրդներին՝ հայերին, վրացիներին և թուրքե-
րին»—այսպես է բացատրում և որակում Թումանյանն Անդրկովկասի ազգային
կոտորածները, իսկ ավելի վաղ, 1906 թվին, Փ. Վարդազարյանին գրած նա-
մակում ցավով ու զայրոյթով խոսելով այդ կոտորածների մասին, գրում է.
«Այսքան տգեղ, այսքան լիբր, այսքան անիրավ, հրեշական կռիվ, ինչ որ
թուրք-հայկական կոտորածներն են, դժվար թե եղած լինի»: Եվ ավելաց-
նում է. «մենք այս ցած ու տմարդի կռիվ միանգամայն դուրս մնացինք
Ռուսաստանի ազատագրական մեծ կռիւց»: Իսկ ինքն այդ ժամանակ Լոռու-
Ղաղախի շրջաններում իր սպիտակ գրոշակով համերաշխութեան և խաղա-
ղութեան գործն էր տանում հայ և թուրք բնակչութեան միջև:

Այս բոլորից հետո պարզ ու բնական է Թումանյանի ջերմ և սրտա-
քուլի ողջունն Անդրկովկասում սովետական իշխանութեան հաստատման
առթիւ, մի իշխանութիւն, որ բերում էր իր հետ հասարակ ժողովրդի

¹ „Борьба“ № 240, 16 октября 1919 г.

² Журнал „Братство“, Тифлис, 1920 г., էջ 12—13.

համար Թումանյանի տարիներով երազած խաղաղ կյանք, արդար աշխատանք, ազատ օր և երջանկություն:

1921 թ. փետրվարի 25-ին Թումանյանը Թբիլիսիում մեծ ցնծությամբ ողջունում է Կարմիր Բանակի մուտքը Թբիլիսի, կարմիրբանակայիններին իրենց ձիերի վրա համեմատելով Մուրոմցի իլիայի վիտյազների հետ.

— Ահա մի իշխանություն, որի գերբի վրա տեսնում ենք ոչ թե զազաններ ու գիշատիչ թռչուններ, այլ մուրճ և մանգաղ, արդար աշխատանքի սիմվոլը: Մի իշխանություն, որ դալիս է ոչ թե կովեղու, կոտորելու ժողովուրդներին, այլ հաշտ ու խաղաղ կյանք բերելու ազնիվ աշխատանքով:

1941 թ. փետրվար.